


կը դնեն եղեր՝ առատութեան նշան սեպելով . և որովհետև աս ծաղիկը արևատեն ջրէն դուրս կ'ելլէ , ու արևը մտնելէն ետքը կը գոցուի ու ջրին մէջ կը մտնէ , ասկէ կը սեպուի եղեր նաև աշխարհքի ստեղծմանը և արեգական ելլելուն ու մտնելուն նշան . ասոր համար եգիպտական հրեանութեանց վրայ խիստ շատ կը գրտնուի լուտասին պատկերը :

Հին ատեն Հնդկաստանցիք ալ մեծ համարում ունին եղեր աս ծաղկին վրայ , և իրենց սրբազան սեպած գրքերէն մէկուն մէջ շատ առասպելներ կը պատմեն ասոր վրայ որ հոս դնելը աւելորդ կը համարինք :

Բայց չենք կրնար լմնցընել աս կարճ յօդուածը՝ առանց յիշեցընելու մեր ընթերցողաց՝ թէ պէտք է շատ զգուշանան բարոյապէս լուտասակեր ըլլալէն . այսինքն պէտք չէ այնպէս յարին օտար ազգաց ու օտար աշխարհաց բաներուն որ ինչուան իրենց հայրենեաց սէրը մոռնան :

Անգ ամբարիշտըն լուտաս սղիտաբերն իւր պրտողով Ըզբարեկամն Ոգիսեայ զթըռուառականս թովելով Ետ ըզսիրուն հայրենինն 'ի մուացօնս արկանել :

ՎԱՆՈՐԻ :



ՀԱՆՔԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Բշխարհիս երեւել ածխահանքերուն վրայ :

ԲՇԽԱՐՀԻՍ մէջ ինչուան հիմա գտնուած ամենէն մեծ ու առատ ածխահանքերը Բնդղիայի ու Սկովտիայի մէջ են : Բն ածխահանքերուն բազմութիւնը կարգէ դուրս բան է , ու մէջերնէն ելած ածուխին չափը հաշիւը չկայ : Բժխաքարը հանելու համար մեծամեծ մեքենաներ , գետնափոր ճամբաներ , ու զանազան ջրանցքներ շինուած են . ասանկով դիւրաւ ու քիչ ծախքով կը հանեն ածուխն ու տեղէ տեղ կը տանին . ա-

նանկ որ ոչ միայն Բնդղիոյ մէջ խիստ շատ կը գործածեն նոյն ածուխէն , ուր որ շատ աժան է , հապա նաև դրսի երկիրներ ալ կը տանին , ու մեծ վաստակ կ'ընեն : Բիայն Վիւքասլ քաղքին ածխահանքին մէջ , որ աշխարհքիս մէջ ամենէն առատն է , վաթսուն հազար մարգէն աւելի կ'աշխատի , ու ամէն տարի երեսունուվեց միլիոն կենդինար՝ ածուխ կ'ելլէ :

Վաղղիոյ մէջ ալ թէպէտև շատ ածխահանքեր կան , բայց Բնդղիային համեմատելով՝ խիստ քիչ բան է . անանկ որ բոլոր Վաղղիոյ մէջէն ամէն տարի ինը միլիոն կենդինար ածուխ կ'ելլէ . իսկ Բնդղիոյ մէջ միայն ամէն տարի գործածուած ածուխին չափը եօթանասունուհինգ միլիոն կենդինարէն աւելի է : Վաղղիայի ամենէն երևելի ածխահանքներն են Սուրբ Ստեփանոս ու Սիւ-տը-ժիէր ըսուածները : Բն ածխահանքերէն ու անոնց քովերէն ամէն տարի իրեք միլիոն կենդինար ածուխ կ'ելլէ . հազար չորս հարիւր հոգի կ'աշխատին , տասնըմէկ շոգեշարժ մեքենայ կը բսնի , վեց հատ ջրաբաշխական մեքենայ , ու եօթանասուն ալ ուրիշ տեսակ մեքենաներ :

Պեճիան ալ հանքային ածուխի կողմանէ շատ հարուստ է . Սոնս , Շարլըրուա ու Լիէժ քաղքերնեւրուն քովերէն շատ կ'ելլէ . քսան հազար հոգի կ'աշխատին հոն , ու տարին տասուերկու միլիոն կենդինար ազնիւ ածուխ կը հանեն :

Վերմանիայի մէջ ամէն տեղ չգրտնուիր հանքային ածուխ . Սաքսոնիա , Պաւերա , Բստրիա , Պոհեմիա , Սաճառստան և ուրիշ քանի մը գաւառներ բաւական բան կ'ելլէ , բայց հասարակ տեսակն է . իսկ հիւսիսային երկիրներուն մէջէն , ինչպէս Շուեետ , Վորուեկիա ու Ռուսստան , գրեթէ ամենեւին չելլեր : Բմանապէս Իտալիոյ , Սպանիոյ , Փորթու-

1 Quintal métrique.

կալի մէջէն ալ ոչինչ բան կ'ելլէ , ան ալ ազնիւ ածուխ մը չէ :

Տարակոյտ չկայ թէ հանքային ածուխը աշխարհքիս ուրիշ մասերուն մէջ ալ կը գտնուի . և ինչպէս որ կ'ըսեն՝ Չինու երկրէն խիստ շատ կ'ելլէ , ու Չիները փայտի տեղ անվկայ կը գործածեն շատ բաներու մէջ , ու անունը քարի թանաք դրած են : Շատ հաւանական է թէ նաև Մասիայի ուրիշ կողմերը , և Հայաստանի մէջ ալ ըլլայ , ինչպէս ուրիշ անգամ ալ ըսեր ենք : Վերիկա ալ Սուրբ Դոմինիկոսի , Վանատայի , Սիւրբեալ Վահանգներուն մէջ և ուրիշ տեղուանք շատ կայ :

Հիմա գանք հանքային ածուխին գործածութեանը : Ըստ ածուխը՝ որ գեանին տակը մնացած բոյսերէն ձևացած է , կրակի հարկաւորութիւն ունեցող ամէն տեսակ արուեստներու մէջ կրնայ գործածուիլ . միայն յախճապակէ բաներ շինելու չի գար : Հանքային ածուխին օգուտները խիստ շատ են . մէյմը որ հասարակ փայտէն աժան է , անկէ շատ աւելի տաքութիւն ունի , ու աւելի ալ կը դիմանայ , անանկ որ շատ անգամ մէկ մաս հանքային ածուխը՝ հինգ մաս հասարակ փայտին տեղը կրնայ բռնել : Արհրորդ , մետաղագործութեան տեսակ արուեստները՝ շատ փայտ կ'ուզեն . ուստի ուր որ քիչ անտառ կը գտնուի , փայտին քիչութեանը համար ան արուեստները շատ առաջ չեն կրնար երթալ . հանքային ածուխը խիստ առատ ու աժան ըլլալով՝ փայտի տեղ կը բռնէ այն արուեստներուն մէջ . միայն աս կայ որ եթէ ածուխը անմիջապէս մետաղին հետ միանայ ու անանկ վառի , ան ատեն վնասակար է : Սետաղագործութեանէ զատ՝ ուրիշ գործարաններու և արուեստներու մէջ՝ ինչպէս աղի , պղլի , աղբորակի , շաքարի , օղիի գործարաններուն մէջ խիստ ազէկ կը գործածուի . նմանապէս թափիչները , այսինքն լաթ լուացողները , ներկա-

րարները , խոյրարարները ու գարեջուր շինողները հանքային ածուխ կը գործածեն : Ըստնցմէ զատ ուրիշ շատ օգուտներ ալ ունի աս ածուխը . վասն զի թէ որ թորեցընելու ըլլանք՝ մէջէն շատ օգտակար նիւթեր կ'ելլեն . տեսակ մը ձիւթ ունի որ երբոր նաւերուն տակը քսեն՝ ծովային ձախները չեն կրնար նաւը ծակծրկել ու վնասել : Տեսակ մը թթու կ'ելլէ մէջէն՝ որ անասնաբուժութեան արուեստին մէջ ու խաղախորդութեան համար շատ յարգի է : Շատ առատ է նաև մէջէն ելած ամմոնիաքը , ու խիստ ազնիւ մրաներկ՝ կուտայ , որ ուրիշ նիւթերէ ելածէն շատ ազնիւ է . իսկ իրեն մոխիրը երկրագործութե մէջ խիստ ազէկ պարարտութիւններէն մէկն է : Հանքային ածուխը տներու մէջ ալ գործածելու յարմար ու օգտակար է . և ոչ միայն հօտը ամենեւին վնաս մը չի տար , հապա նաև վառելու ժամանակը՝ ռետինի ու բալասանի հոտին պէս ջղային նեղութիւններն ու կուրծքի ցաւերը կը մեղմացնէ : Ըստ ածուխին այսչափ օգուտները տեսնելով՝ շատ փափաքելի բան էր որ արևելք ալ ածխահանքեր գտնէին , ու ամէն բանի մէջ գործածելով՝ Աւրոպացոց անկէ հանած օգուտները մեր արևելքիք ալ վայելէին :

Հանքային ածուխի նշաններ : — Հանքային ածուխ փնտուելու համար նախ գիտնալու է թէ ինչ տեսակ հողերու մէջ ընդհանրապէս կը գտնուին . որոնց վրայ առաջ խօսեցանք . կան նաև քանի մը նշաններ ալ , որոնք կարգաւ դնենք հոս :

Ա . Արբոր դաշտի մը , լեռան մը կամ նոր հերկած երկրի մը մէջ սև գունով հողի կարգ մը գտնուի , որուն մէջէն փտտած հերձաքարեր ելլեն՝ հանքային ածուխի կտորտուքներով խառն , որ արևուն մէջ կը փայլին , ու դիւրաւ կը բաժնուին հեր-

1 Noir de fumée.

ձաքարէն՝ թէ որ քանի մը ափ նոյն սևորակ հողէն առնես ու մէկտեղ լուսաս, նշան է թէ հոն հանքային ածուխ կայ :

Բ . Արբոր հեղեղի մը և կամ առուի մը յատակին վրայ հանքային ածուխի կտորուանքներ տեսնուին :

Գ . Արկաթախառն ու կարային ջրերուն տակը իջած դիրտէն կ'իմացուի թէ հանքային ածուխ կայ թէ չկայ մօտ տեղուանքը :

Դ . Արբոր կոպիճի ու գաճի հանքերու մէջ մոխրագոյն կաւիճ ու վրան բուսոց պատկերներ տպաւորուած հերձաքարեր իրարու վրայ կեցած ըլլան :

Այ նշանները որովհետև աւելի ձորերու մէջ կը տեսնուին, պէտք է աղէկ ուշադրութեամբ քննել այնպիսի տեղերուն հողի կարգերը . և դիւրաւ հանքային ածուխը գտնելու համար՝ ինչուան հիմա ինչ հողերու կարգերու մէջէն որ ելած է աս ածուխը, ան կարգի հողերէն մէյմէկ քիչ օրինակի համար առնելու է, նաև նոյն կարգերուն դիրքն ու հակումը նշանելու է : Այսպիսի պատրաստութիւն ձորերուն մէկ ծայրէն ինչուան մէկալ ծայրը հողերուն կարգերը քննելու, և ջրերուն մաշեցուցած տեղուանքը դիտելու է, որ շատ անգամ այնչափ մաշեցուցած կ'ըլլան որ հանքային ածուխը յայտնի կը տեսնուի : Այս փորած տեղուանք ու քարահանքերու մէջ նոյն քննութիւններն ընելու է . կանաչ դաշտերու մէջ խլուրդի ճամբաներն ալ հանքային ածուխի նշաններ են : Բայց աւելի ուշադրութեամբ պէտք է քննել հերձաքարին շատութիւնը . ուր որ սև ու փտտած հերձաքար գտնուելու ըլլայ՝ մուրճով մը ան տեղը փորելու է . և թէ որ հերձաքարը գաճի երկու խաւերու մէջ կեցած ըլլայ, ու մոխրագոյն, կապտագոյն կամ սևորակ և կամ միջախառն հողի նման տեսք մը ունենայ, ու մէջէն երկաթախառն հողերու կոշտեր ու սև նիւթերու կտորուանքներ

եղելու ըլլան (որոնք ահուայի տակ կը կտորտին առանց լորձուներով հալելու) մարդ կրնայ յուսալ թէ նոյն հերձաքարոտ տեղուանքը հանքային ածուխ գտնուի : Բուն հանքային ածուխի հողերուն տեղը հասնելէ առաջ՝ անկից ինչուան ինը տասը մղոն հեռաւորութեամբ մոխրագոյն կամ կարմրագոյն կրաքարեր կը հանդիպին, որ շատ անուանի են իրենց մէջէն ելած բրածոյ ժամուանքներուն համար : Այ կրաքարերը ընդհանրապէս այնպիսի ժայռերուն՝ վրայ կեցած են՝ որոնցմով կը ձևանայ պարտ ածուխը : Այն կրաքարերուն վրայ ալ շատ անգամ երկաթախառն նիւթեր ու կաւի և գաճի խաւեր պատած են :

Կոպիճու երկիրներուն մէջ հանքային ածուխ գտնելու ինչ գլխաւոր նշաններ որ կային՝ յիշեցինք : Բսկ կըրաքարոտ երկիրներու մէջ քիչ կը գտնուի աս ածուխը, ան ալ միայն քանի մը նշաններ ունի . մէյմը կրաքարի թերթերուն սևութիւնը, և անոնցմէ ելած գարշահոտութիւնը՝ թէ որ գետին զարնելով կտորելու ըլլաս . երկրորդ՝ նոյն երկիրներէն ելած կարային նիւթոց գոլոշիքները :

Այս և որ աս նշաններով մարդս բաւական կրնայ իմանալ թէ ուր տեղուանք հանքային ածուխ կը գտնուի . բայց փորելով շատ ծախք ընելէն առաջ, ապահովութեան համար փորձ ալ ընելու է . այսինքն ջրհորի պէս խորունկ ծակ մը կամ գետնափոր ճամբայ մը բանալ տալով իմանալու է թէ հանքային ածուխ կայ թէ չկայ, և կամ որչափ խորութիւն ունի գետնին երեսէն ածուխին խաւը, ու թանձրութիւնը որչափ է : Բայց Անգղիոյ մէջ, նաև ուրիշ մէկ քանի տեղուանք ալ, ջրհոր կամ գետնափոր ճամբայ բանալու տեղը՝ շատ

1 Երկրաբանական գիտութեանց մէջ ծայր ըսելով որ և իցէ կարծր նիւթերու զանդուած կ'իմացուի . ուստի պէտք է միայն քարէ ժայռերու վրայ հասկնալ :

անգամ գչիր՝ ըսուած գործիքը կը բանեցընեն, որ շատ աւելի շահաւոր է: Ըս գչիրը երկրթէ գործիք մըն է հասարակ գչիրի նման. վարի կտորը կը փոխուի, և իւրաքանչիւր գործողուէ համեմատ՝ այլևայլ ձևով կտորներ կը դրուին. ինչպէս երբեմն սանդիտուի՝ ձևով կ'ըլլայ, երբեմն քառակուսի կտոր մըն է՝ տակը ճանկի ձևով բաներ հաստատուած. երբեմն թուրի պէս երկու երկաթ խաչաձև վրայէ վրայ հաստատուած: Ըս գչիրը ծանրոցով մը կամ լծակի պէս գործիքով մը գետին կը խոթեն, ու երթալով կ'օթը կ'երկընցընեն՝ երկրթէ ձողեր աւելցընելով. և ինչուան հարիւր գրկաչափ խորութեամբ ծակ կըրնան բանալ. բայց առաջ երթալու համար՝ ստէպ ստէպ գչիրին բացած ծակը մաքրելու է. որով կ'իմացուի նաև թէ հետզհետէ ինչ տեսակ հողերու կամ քարերու մէջէն կ'անցնի գչիրը, ու երբ հանքային ածուխին կը հասնի. հոն հասնելուն պէս՝ գործիքին վրայ նշան դնելու և նայելու է՝ թէ ինչուան որ գչիրը ածուխին խաւը ամբողջ ծակէ՝ որչափ տեղ կը խրի. ասով յայտնի կ'ըլլայ ածուխին թանձրութեանը ճիշդ չափը: Ըս բաներս ընելու ատեն մասնաւոր արթնութիւն պէտք է ընել աշխատաւորաց վրայ. վասն զի երբեմն թշնամութեամբ կամ խարդախութեամբ իրենց տէրը ստրկէ հանելու համար՝ ծակին մէջ հանքային ածուխի կտորներ կը նետեն, ու երկրին տէրը կը խաբեն, անանկ որ մեծամեծ ծախքերով գետինը փորել տալէն վերջը՝ բան չելէր:

Հ. Բ. Ե

1 Պորտու :
2 հալան էլի :

Ա Ռ Ա Կ

Պորտ և կով:

ՊՈՐՏ մը կար խիստ կըռկըռան
 Ընհանդարտ ու կըռուրտան .
 ()ը մը կով մը կը տեսնէ ,
 հասակ տւատ է կ'ըսէ .
 Բլլամ սըւոր հաւասար ,
 կարծեմ շատ վար չեմ մընար :
 Ըս կ'ըսէ ու կը փըչուի
 կ'ուռի կ'ուռի կը տըկուի .
 Ըռաջ էր հակըթի չափ ,
 կ'ըլլայ խընծորի մը չափ .
 Քուրիկ , կ'ըսէ քովինին ,
 Կայէ հասայ սա կովին . —
 Չէ , կ'ըսէ ան , դեռ ո՛ր էս : —
 Հիմա . — Ոտքին չափ ալ չես : —
 հապա հիմա՞ , լաւ նայէ : —
 Քա՛ դուն ո՛ր էս՝ ան ո՛ր է :
 Որո՛ւ կ'ըսես . նախանձէն
 խելքը գացեր է գըլխէն .
 Պընա՛ կ'ըսէ դուն մէկդի ,
 Լաւ մը կ'ուռի՝ կը ճաթի :

Շատ մարդ եմ տեսեր աս գորտիս նըման ,
 Չափերնին չէյտեն՝ մեծ մեծ կ'որոտան .
 Աղքատը կ'ուզէ ըսուիլ մեծատուն ,
 Գեղացին իշխան , անխեղքն իմաստուն .
 Ո՛վ մարդ , կը ճաթիս . — որո՛ւ կ'ըսես դուն .
 Աշխարհս այսպիսեօք լեցուն է լեցո՛ւն :